«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման ՝Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Արոսյան Մարիա

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն——---------3

Արժեքները միջմշակութային համեմատական հետազոտությունների համատեքստում__ 5

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում_____8

Եզրակացություն_____14

Գրականության ցանկ_____15

Ներածություն

Մշակութային միջավայրը ձևավորում է անձին որպես հասարակության անդամ, որպես յուրահատուկ արժեքների կրող: Արժեքները ձևավորում են որոշակի սահմաններ ու մարդկային վարքի նորմեր և իրականացնում են նպատակների և դրդապատճառների ձևավորման գործառույթներ, պայմանավորում վարքի որոշակի տիպի նախընտրելիությունը՝ ապահովելով իրականության նկատմամբ ընտրական վերաբերմունք: Արժեքները հասարակության կողմից ընդունված ցանկալիի մասին պատկերացումներն են:

Ըստ միջնակարգ կրթության պետական չափորոշրի սովորողի արժեքային համակարգը հանդիսանում է միջնակարգ կրթության բովանդակության բաղադիրչներից մեկը:Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա) գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների,

ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը.

բ) հարգի Հայաստանի պետական խորհրդանիշերը, լինի հայրենասեր, կարևորի ազգային

հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը.

գ) գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն

արժեքներ են ժամանակակից աշխարհում.

դ) գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային

հմտությունները, մասնագիտական վարպետությունը.

ե) կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները,

լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ.

զ) կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը.

է) գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում և հասարակության մեջ, լինի նախաձեռնող,

դրսևորի արժանավայել պահվածք.

ը) գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ

հարգանքի դրսևորման կարևորությունը.

թ) հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր,

հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների

ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ.

ժ) անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի

թերագնահատումը կամ գերագնահատումը.

ժա) դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի

ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը.

ժբ) մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը,

հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների

կիրառման գործում:

Հետազոտության նապատակն է ուսումնասիրել սովորողի արժեքային համակարգի էությունը, ցույց տալ դրա ազդեցությունը արձի զարգացման կայացման վրա:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. Ուսունասիրել և դասակարգել սովորողի արժեքները,
2. Ուսումնասիրել և առանձնացնել սովորողի արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները,
3. Ցույց տալ կապը սովորողի արժեքային համակարգի ձևավորման և հայոց գրականության ակնառու կապը:

Հետազոտույան առարկան սովորողի ուսումնական միջվայրն է, մասնավորապես հայոց գրականություն առարկան, օբյեկտը սովորողն է՝ իր արժեքային համակարգի ձևավորման գործընթացում:

Թեմայի արդիականությունը. հաշվի առնելով աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները, հասարակական, տնտեսական, տեղեկետվական տեխնոլոգիաների գերզարգացման առկայության պայմաններում, փոխվում են նաև արժեքները, որոնց ուսումնասիրությունը և փոփոխությունների պատտճառների բացահայտումը կարևոր նշանակություն ունի ազգապահմանման, մշակությապահմանման գործում:

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և գրականության ցանկից: Առաջին գլխում ներկայացվում է արժեքները միջմշակութային համեմատական հետազոտությունների համատեքստում, իսկ երկրորդ գլխում ՝ սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում:

Արժեքները միջմշակութային համեմատական հետազոտությունների համատեքստում

Տարբեր հեղինակներ տարբեր մոտեցումներով են հանդես գալիս արժեքները սահմանելիս: Օրինակ, արժեքների էությունը դրանց նշանակալիությունն է, այլ ոչ թե դրանց փաստացիությունը (Մ.Ռոկիչ, Շ.Շվարց): Հեղինակների մի խումբ (Կ.Կլակխոն, Ջ.Ռոտեր) արժեքները դիտարկում են որպես ընտրություն՝ սահմանելով դրանք որպես գիտակցված և ոչ գիտակցված, անձին կամ խմբին բնորոշ ցանկալիի մասին պատկերացումներ, որոնք պայմանավորում են նպատակների ընտրությունը՝ հաշվի առնելով միջոցները և գործունեության ձևերը: Դ.Լեոնտևի տեսության համաձայն՝ արժեքները սահմանվում են որպես ֆենոմեն, որը բնութագրվում է կոնկրետ գործոններով, մասնավորապես՝ բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները, արժեքները համակարգված են, մարդկային արժեքները սերում են մշակույթից, արժեքներն իրենց ազդեցությունն են ունենում կյանքի բոլոր ոլորտներում :

Ընդունված է տարբերակել արժեքների հետևյալ երկու տիպերը.

• Սոցիալական խմբերին բնորոշ արժեքները հասարակության մեջ անհատի համար նշանակալի նյութական, սոցիալ-քաղաքական, հոգևոր և այլ արժեքներն են: Սոցիալական խմբերին բնորոշ արժեքների ուսումնասիրությունը կիրառելի է այն ժամանակ, երբ այդ արժեքները բնութագրում են հասարակության սոցիալական մշակույթը և ընդհանուր են տվյալ մշակույթը կազմող անհատների համար:

• Անձնային-անհատական արժեքները դրսևորվում են անձի արժեքային կողմնորոշումներում, վերջիններս սերում են հասարակական, ազգային, մշակութային արժեքներից: Յուրաքանչյուր ժամանակաշրջան բնութագրվում է արժեքների բնորոշ հավաքակազմով, որն ապահովում է հանրության կենսագործունեության կարգը:

Արժեքներն անհատական և սոցիալական մակարդակներում տեղի ունեցող փոփոխություններին հետևելու համար լավ ցուցիչներ են, որոնք նպաստում են այդ գործընթացներն ավելի լավ հասկանալուն:

Արժեքների ուսումնասիրման տեսություններ. Արժեքները մեկնաբանող տարբեր տեսությունների շարքում կարելի է անդրադառնալ հիմնական տեսություններին, որոնք տարածված են սոցիալ-հոգեբանական քննարկման դաշտում:

Արժեքները Մ.Ռոկիչը սահմանում է որպես կայուն համոզմունքների տարատեսակ, որի համաձայն՝ գոյության այս կամ այն ձևն ավելի նախապատվելի է, քան մյուսը: Մ.Ռոկիչն առանձնացնում է բազային (ունիվերսալ, տերմինալային) և գործիքային (անհատական) արժեքներ: Բազային արժեքները մեր համոզմունքներն ու պատկերացումներն են վերջնական

նպատակի մասին, ինչին ձգտում ենք, օրինակ՝ երջանկություն, իմաստություն: Գործիքային արժեքները միջնորդավորված բազային արժեքների հասնելու ճանապարհին ցանկալի վարքի մասին պատկերացումներն են: Մ.Ռոկիչի տեսության համաձայն՝ հնարավոր է առանձնացնել անձի կողմնորոշումը և սահմանել ու հստակեցնել նրա հարաբերությունները շրջապատող աշխարհի, հասարակության այլ անդամների ու ինքն իր հանդեպ:

Շ.Շվարցը գտնում է, որ արժեքների հիմքում ընկած են նպատակները: Այդ պատճառով նա արժեքները խմբավորել է՝ ելնելով դրանց հիմքում ընկած նպատակների տեսանկյունից: Շ.Շվարցը, հիմնվելով մշակութային արժեքների չափողական մոտեցման վրա, 1990-ականներին ուսումնասիրություններ է կատարել 54 երկրներում՝ արդյունքում հետազոտելով 44.000 մարդու, և դուրս է բերել 10 բազային արժեք, որոնք այս կամ այն չափով արտահայտված են բոլոր մշակույթներում: Շվարցի առանձնացրած տասը բազային արժեքներն են՝ կոմֆորմություն, ավանդականություն, բարություն, ունիվերսալիզմ, ինքնուրույնություն, ստիմուլյացիա, գեդոնիզմ, ձեռքբերում, իշխանություն, անվտանգություն :

Հաջորդ տեսության հեղինակը Ռ.Ինգլհարթն է, որը միջմշակութային հետազոտությունների իրականացման արդյունքում փաստում է, որ հասարակությունները կարելի է համեմատել ըստ հետևյալ երկու չափումների (այս չափումները դուրս են բերվել «Համաշխարհային արժեքների հետազոտության» (World Values Survey) արդյունքում).

• ավանդական և աշխարհիկ-ռացիոնալ արժեքներ. ավանդական արժեքների շարքին են դասվում կրոնը, ընտանիքը, բացարձակ ստանդարտները, սոցիալական հարմարվողականությունը և այլն: Աշխարհիկ-ռացիոնալ արժեքներն են ռացիոնալ վարքը, հաջողության ձգտումը, կրոնի ցածր դերը և այլն;

• գոյապահպանման և ինքնարտահայտման արժեքներ. գոյապահպանման արժեքներն ընդգրկում են տնտեսական և ֆիզիկական անվտանգությունը, նյութական արժեքները, այլախոհության հանդեպ անհանդուրժողականությունը, մարդու իրավունքների և ազատության ցածր մակարդակը և այլն, իսկ ինքնարտահայտման արժեքները՝ անձի, ազատության, մարդու իրավունքների, նյութական բարեկեցության, հաջողության, տնտեսական ապահովվածության, գենդերային հավասարության բարձր մակարդակը և այլն:

Ըստ Ինգլհարթի՝ տնտեսապես չզարգացած հասարակություններում նախապատվություն են տալիս գոյապահպանման ու ապահովության արժեքներին (տնտեսական աճ, կայուն տնտեսություն, կարգուկանոնի հաստատում և այլն): Իսկ աշխարհիկ-ռացիոնալ և ինքնարտահայտման արժեքները համարվում են հետմատերիալիստական, այսինքն՝ դրանք բնորոշ են նյութական արժեքների հրատապությունը հաղթահարած հասարակություններին:

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ արժեքները դիտարկվում են որպես հիմնարար բարոյական և էթիկական նորմեր, որոնք միևնույն ժամանակ իրականացնում են կարգավորող

և կանխատեսող ֆունկցիա և ապահովում են սոցիալական համակարգի ամբողջականությունը: Արժեքները, միմյանց հետ փոխազդեցության մեջ մտնելով, ձևավորում են մի համակարգ, որը հասարակության կազմավորման կարևորագույն տարրն է, և հենց արժեքային տարբերություններն են, որ մշակույթների ուսումնասիրման և համեմատական եզրեր տանելու գործում մեծ դեր ունեն :

Միջմշակութային համեմատական հետազոտություններ. Միջմշակութային համեմատական հետազոտությունները յուրաքանչյուր հասարակությանը հնարավորություն են ընձեռում կյանքի կազմակերպման տարբեր ոլորտներում առանձնացնել սեփական յուրահատկությունները, տեսնել ընդհանրություններն ու տարբերություններն այլ հասարակությունների հետ համեմատության դիտանկյունից: Վերջին տարիներին նշանակալիորեն ավելացել են ինչպես անհատական, այնպես էլ մշակութային մակարդակում արժեքային տարբերություններին ուղղված հետազոտությունները: Նման մի քանի ուսումնասիրությունների, դրանց մեթոդաբանական որոշ հարցերի կանդրադառնանք ստորև:

Համեմատական հետազոտությունների դասակարգում: Համեմատական հետազոտությունները կարելի է տիպաբանել հետևյալ մի քանի չափորոշիչներին համապատասխան.

• ըստ համեմատության օբյեկտի, որն իր հերթին ևս բաժանվում է (միջերկրային հետազոտություններ, որտեղ հետազոտման օբյեկտն են առանձին երկրները, միջմշակութային հետազոտություններ, որտեղ հետազոտության օբյեկտ են հանդիսանում տարբեր մշակույթները և այլն);

• ըստ ընդգրկման՝ համեմատվող օբյեկտների (երկրների) քանակի և ժամանակային միջակայքի (հետազոտություններ, որտեղ ընդգրկված են փոքր թվով երկրներ, տարածաշրջանային հետազոտություններ (Եվրոպա, Ասիա, ԱՊՀ), Միջազգային հետազոտություններ, օրինակ՝ Gallup World Poll, WVS, ISSP);

• ըստ թեմատիկ ուղղվածության (օրինակ, ակադեմիական հետազոտություններ, որոնք ուղղված են կարևոր սոցիալական գործընթացների կամ արժեքների ուսումնասիրմանը, հասարակական կարծիքի հարցումներ և այլն):

Տեսաբանները համեմատական հետազոտությունների սկիզբը համարում են Երկրորդ աշխարհամարտին հաջորդած տարիները: Այդօրինակ առաջին հետազոտությունն իրականացվել է 1948-1949թթ., որի նպատակն էր ուսումնասիրել պետությունների և ժողովուրդների պատկերացումները պատերազմի մասնակից դաշնակից երկրների և հակառակորդ երկրների միջև: Միջմշակութային հետազոտությունների զարգացման մեջ կարևոր էր 1962թ. իրականացված «Հասարակության դիրքորոշումները միացյալ Եվրոպայի նկատմամբ» ուսումնասիրությունը, որը հետագայում սկիզբ դրեց այժմ այդ ոլորտում հայտնի

նախագծի՝ «Եվրաբարոմետրի» համար, որի առաջին ալիքն իրականացվել է 1970թ.: Հենց 70-ական թվականներից սկսվեց համեմատական հետազոտությունների ինստիտուցիոնալացումը, հիմնվեցին տվյալների հավաքագրումը կոորդինացնող կենտրոններ:

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Ի՞նչ է արժեքը և ինչպե՞ս է այն ձևավորվում սովորողների մոտ:

Արժեքները կարելի է դասակարգել որպես համընդհանուր, մարդկային, անձնական, ընտանեկան, սոցիալ-մշակութային, բարոյական, էթիկական, գեղագիտական, հոգևոր, նյութական, տնտեսական և պրագմատիկ:

Արժեքները առաջնորդում են մարդու վարքը և ծառայում են որպես ուղեցույց հասարակության զարգացման գործում: Օրինակ ՝ ազատության արժեք կունենա այն անձը, ով կարևորում է ազատ ժամանակ ունենալը :

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն իմաստով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Ըստ հանրակրթության պետական չափորոշչի ՝ «Հայոց լեզու, գրականություն» բնագավառը ներկայանում է «Մայրենի» (1-6-րդ դասարաններ), «Հայոց լեզու» (7-12-րդ դասարաններ), «Գրականություն» (7-12-րդ դասարաններ) առարկաներով:

Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվում է, որ հայոց լեզվի և գրականության ուսուցումը պարտադիր է 1-12-րդ դասարաններում: Դրանց ուսումնասիրման նպատակը հայերենով գրագետ հաղորդակցվելու, բանավոր և գրավոր շարադրանք ստեղծելու, գրական և ոչ գրական տեքստեր վերլուծելու, տեքստից սովորածը սեփական խոսքի մեջ

կիրառելու կարողությունների, ինչպես նաև լեզվամտածողության, ազգային արժեհամակարգի և ինքնության ձևավորումը և զարգացումն են: Մյուս կողմից՝ մայրենի լեզուն այլ առարկաներ, այդ թվում՝ օտար լեզուներ ուսումնասիրելու հիմնական միջոցն է:

1-6-րդ դասարաններում «Մայրենի» միասնացած (ինտեգրված) առարկան լուծում է տարբեր ուսումնական խնդիրներ՝ բանավոր և գրավոր հաղորդակցման, ընթերցանության, լեզվական և արժեքային համակարգերի ձևավորման ուղղությամբ: Մայրենիի դասավանդումը չափելի վերջնարդյունքների միջոցով նպաստում է Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների ապահովմանը՝ հիմք ստեղծելով միջին դպրոցում ուսումնառությունը շարունակելու համար:

7-12-րդ դասարաններում հայոց լեզուն և գրականությունը ուսումնասիրվում են որպես առանձին առարկաներ: 7-9-րդ դասարաններում հայոց լեզվի՝ որպես առանձին առարկայի դասավանդման ընթացքում կարևորվում է քերականության ամբողջական և համակարգված ուսումնասիրումը: Ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում հիմնական դպրոցում անցած նյութի պարուրաձև կրկնությանը զուգահեռ ուսուցանվում է ոճագիտություն, որը սովորողին հնարավորություն կտա կատարելագործել խոսք կազմելու կարողությունը՝ ճիշտ և գրագետ համադրելով լեզվաքերականական միավորները, կիրառելով հայոց լեզվի ոճական առանձնահատկությունները:

Հանրակրթական դպրոցում գրականության՝ որպես առանձին առարկայի ուսուցումն իրականացվում է 7-9-րդ դասարաններում: Միջին դպրոցում թեմաները բաժանված են ըստ գրական ժանրերի, որոնց տիրույթում պահպանված է հեղինակների ժամանակագրական հաջորդականությունը: Ավագ դպրոցում սովորողներն ուսումնասիրելու են հայ գրականություն, որը կառուցված է ժամանակագրական մեթոդով՝ որոշակի թեմատիկ միավորներով (մոդուլներով) ուսումնառության համար:

Հանրակրթական դպրոցի 7-12-րդ դասարաններում գրականության ուսումնասիրությունը նպաստում է սովորողի՝ պատմական ժամանակաշրջանի, հեղինակների կենսագրության, տվյալ գրողի բերած նորության, հայ գրականության զարգացման վրա ունեցած ազդեցության, գրական սեռերի, ժանրերի, ժամանակաշրջանի հետ անմիջական կապի մասին պատկերացման ձևավորմանը: Գրական երկի ուսումնասիրությունը նպաստում է ստացած գիտելիքը սեփական խոսքով վերարտադրելու հմտությունների, վերլուծական և քննական կարողությունների, ինչպես նաև գրական ճաշակի ձևավորմանը, ազգային ինքնության ճանաչմանը և արժևորմանը:

Կարևորվել է վերառարկայական, միջառարկայական, ներառարկայական կապերի հաստատումը: Այդ առնչությունները կապահովեն գիտելիքի յուրացման խորությունը և բազմաշերտությունը, ինչպես նաև լայնությունը և ընդգրկունությունը:

Ընդգծվել են աշակերտի սովորելու կարողության ձևավորումը և զարգացումը՝ հիմքում ունենալով ողջ կյանքում սովորելու, զարգանալու, կատարելագործվելու պատրաստ հայ քաղաքացի կերտելու տեսլականը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները սովորողների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ սովորողը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են սովորողի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Սովորողները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող **գործոններից են ավանդական միջոցները,** այսինքն՝ սովորողի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի

չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:

Սովորողի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս **գործոնը տարիքայինն է,** երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է սովորողի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «սովորողների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս **գործոնը միջանձնային հարաբերություններն** են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև սովորողի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Սովորողի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով հատկապես հայոց լեզվի և գրականության դասընթացների ժամանակ:Գրական կերպարների վերլուծությունը, կերպարների արժեհամակարգի բացահայտումն ու մեկնաբանումը, ուղիղ ձևով օգնում են սովորողներին ձեռք բերել սեջական արժեհամակարգը: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև սովորողների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում

առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, քանի որ համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին սովորողների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, ծրագրային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում սովորողն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Արժեքները կարևորագույն սկզբունքներն են, որոնք առաջնորդում են մարդու վարքը և ծառայում են որպես հասարակության զարգացման կարևոր գործոն:Իսկ հայոց լեզվի և գրականության առարկայի դերը աճող սերնդի մեջ արժեքների ձևավորման գործում առաջնային նշանակություն ունի:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ արժեքների ուսումնասիրությունների արդյունքները թույլ են տալիս դուրս բերել հասարակության կոնկրետ դիմագիծը, արժեքների և սոցիալական ֆենոմենների

միջև կապերը: Արժեքային համակարգի հետազոտությունները կարևոր նշանակություն ունեն իրենց հարուստ ինֆորմատիվ բնույթի շնորհիվ, որը թույլ է տալիս դուրս բերել միջմշակութային տարբերակումներն ու յուրահատկությունները: Դրանց պարբերական ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հստակ պատկերացնել այդ փոփոխությունների հետևանքները, որոշակի կանխատեսումներ անել՝ ելնելով արժեքային պատկերի փոփոխություններից և համապատասխան քաղաքականություն մշակել: Դրանով է պայմանավորված միջմշակութային հետազոտությունների և արժեքների միջազգային համեմատական ուսումնասիրությունների նկատմամբ հետաքրքրությունը:Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Գրականության ցանկ

1. Հակոբյան Լ.Ա, Հայաստանը «Արժեքների համաշխարհային հետազոտության» արդյունքներում», «Նորավանք» ԳՀԿ, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 6, 2014:

2. Леонтьев Д.А., От социальных ценностей к личностным: социогенез и феноменология ценностной регуляции деятельности (статья первая) // Вестник Моск. ун-та. Сер. 14. Психология, 1996, N 4.

3. Rokeach M., The Nature of Human Values, New York, The Free. Press, 1973.

4. Schwartz S.H, Value orientations: Measurement, antecedents and consequences across nations/ In: R. Jowell, C. Roberts et al (Eds.). Measuring attitudes crossnationally: lessons from the ESS. London: Sage, 2006.

5. Елишев С.О., Изучение понятий «ценность», «ценностные ориентации» в междисциплинарном аспекте Ценности и смыслы, № 2 (11), 2011.

6. Андреенкова А.В., Межстрановые сравнительные исследования в социальных науках: методология, этапы развития, современное состояние, Мир России. Социология. Этнология, Выпуск № 3, том 20, 2011.